

ՃՈՐՃ ՊՈՒՇ ԿՐԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԱԾ Է ՀՈԿԼԱՆՏԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

«Աստիէյթըտ Փրես» գործակալութեան տեղեկութիւններուն համաձայն, Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ կրկին անգամ ներկայացուցած է Ռիչըրտ Հոկլանտի թեկնածութիւնը՝ Հայաստանի մօտ Ամերիկայի դեսպանի պաշտօնին:

Սպիտակ Տունը Երեքշաբթի, Յունուար 9-ին յայտարարած է Հոկլանտի թեկնածութիւնը երկրորդ անգամ ըլլալով առաջադրելու մասին: Ամերիկեան Ծերակոյտը, որու հաւանութեան կը կարօտի դեսպաններու նշանակումը, անցեալ տարի քուէարկութեան չէր դրած այդ թեկնածութիւնը: Դեմոկրատ կուսակցութեան ղեկավար անդամներու կողմէն ետք, վարչակազմը ետ կանչած էր Հոկլանտի թեկնածութիւնը: Դեմոկրատ ծերակուտականները դժգոհ էին, որ Հոկլանտ կը մերժէ հայկական կոտորածները որակել ցեղասպանութիւն:

Անցեալ տարուայ Սեպտեմբերին, նախկին դեսպան ձոն Էվընզ ժամանակէն առաջ ետ կանչուեցաւ իր պաշտօնէն եւ տիրող կարծիքը այն է թէ, Էվընզի կատարած կարգ մը յայտարարութիւնները՝ Հայկական Յեղասպանութեան մասին, պատճառ դարձան անոր պաշտօնանկ:

ՅԱՌԱՋԻԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԵՆ ԱՌԱՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՂԻՄՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՈՐՁԷ ՄԻԱԴՈՐՈՒԻԼ

Յառաջիկայ գարնան կայանալիք Հայաստանի խորհրդարանական ընտրութիւններէն առաջ, ընդդիմադիր դաշտը միաւորելու նպատակով այս օրերուն տեղի կ'ունենան բաւականին լուրջ բանակցութիւններ: Մեծամասնական բոլոր՝ 41 ընտրատարած քննարու մէջ թեկնածուներ առաջադրելու գաղափարը բաւական տեղ գտած է ընդդիմադիր կուսակցութիւններուն մօտ: Անկախ թէ իշխանական կուսակցութիւնները ինչ թեկնածուներ կ'առաջադրեն, «Հանրապետութիւն» կուսակցութիւնը կ'առաջարկէ, որ Երեւանի 15 ընտրատարած քննարու մէջ առաջադրուին ընդդիմադիր կուսակցութիւններու ղեկավարները:

«Ազատութիւն» ռատիոկայանին տրուած հարցազրոյցի մը ընթացքին, «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեան յայտնած է թէ, իրենք կողմնակից են ընդդիմութեան «հնարաւորինս լայն դաշտի միաւորման»:

«Դաշինքների ձեւաւորումը՝ թէ՛ տակտիկական առումով, թէ՛ պրակտիկ առումով, հեշտ է ընտրութիւնների շեմին», - յայտնած է Սարգսեան:

Ան չէ բացառած նաեւ համագործակցութիւնը Հայոց Համագրային Շարժում (ՀՀՇ) կուսակցու-



Ստեփան Դեմիրճեան, Արտաշէս Գեղամբան եւ Արամ Սարգսեան ընդդիմադրութեան հանրահաւաքներէն մէկու ընթացքին

թեան հետ. - «Միանշանակ հնարաւոր է: Չգիտես ինչու, բոլորը վախենում են ՀՀՇ-ի անունը տալուց այն դէպքում, երբ ՀՀՇ-ն իսկապէս ընդդիմադիր կուսակցութիւն է»:

Արամ Սարգսեան անընդունելի նկատած է նաեւ գալիք ընտրութիւնները պոչթոթելու տեսակէտը:

«Այսօրուայ բանակցութիւնները իսկապէս հիացնում են ինձ իրենց որակով եւ ընդդիմադիր լիդերների պատասխաններով: Առաջարկում է Երեւան քաղաքում 15 ընտրատարած քննարու առաջադրուել ընդդիմադիր կուսակցութիւնների լիդերներով: Սա միանշանակ յղթանակի

Շար.ը էջ 4

ՍԲ. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԷՋ



Ս. Էջմիածնի Ս. Ծննդեան արարողութեան տեսարան մը

Յունուար 6-ին աշխարհասփիւռ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տօնախմբեց Քրիստոսի Սբ. Ծննդեան եւ Աստուածայայտութեան հրաշափառ տօնը:

Նախորդ օրը, Յունուար 5-ին, յաւարտ երեկոյեան ժամերգութեան, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրի-

արք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցութեամբ Մայր Աթոռի միաբանութեան ու բարեպաշտ հայրդիներու, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մէջ մատուցուեցաւ ձրագալոյցի Սբ. Պատարագ: Պատարագին էր Մայր Աթոռ Սբ.

Շար.ը էջ 4

ՀԻՄՆԱԿԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԱՌԹԻ

Հիւսիսային ԱՄերիկայի Արեւմտեան Թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի հրաւերով աւելի քան 500 ազգայիններ, Յունուարի 6ի երեկոյեան, ներկայ գտնուեցան Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօնախմբութեան:

Հրաւիրեալներու շարքին կը տեսնուէին Լոս Անճելոսի մօտ Հայաստանի Աւագ Հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան, ինչպէս նաեւ Ս.Դ.Հ.Կ.ի, Ռ.Ա.Կ.ի, Հ.Յ.Դ.ի, Թեմական Խորհուրդի, ծիական մարմիններու եւ գաղութի մշակութային եւ հասարակական տարբեր կազմակերպութեանց ու քաղաքապետութեանց ներկայացուցիչներ:

Պըրպէնքի Առաջնորդարանի Գալայճեան սրահին մէջ տօնախմբութիւնն սկսաւ ծննդեան շարականի եւ տան օրհնութեամբ, որուն մասնակցեցան տասնեակ մը եկեղեցականներ: Հայկական տոհմիկ աւանդութեան համաձայն օրհնուեցաւ աղն ու հացը:

Հայ ժողովուրդի բարօրութեան եւ աշխարհի խաղաղութեան ու Մայր Հայրենիքի անսասանութեան ու բարգաւաճման իրենց սրտաբուխ բարեմաղթութիւններն

ուղղեցին Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեան եւ աւագ հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան:

Այս առթիւ գործադրուեցաւ գեղարուեստական ճոխ յայտագիր մը մասնակցութեամբ Արմէն եւ Լուսինէ Օհանեաններու «Բարեկամութիւն» համոյթի զոյգ պարարումներուն, ինչպէս նաեւ «Զարթօնք» Հայկական ժողովրդային Գործիքներու համոյթին, մենակատարութեամբ շնորհալի երգիչ Արմէն Յովհաննիսեանի:

Այնուհետեւ տեղի ունեցաւ ճոխ հիւրասիրութիւն: Տօնական ջերմ ու սիրալիլ մթնոլորտի ներքեւ ներկայները առիթն ունեցան համտեսելու հայկական համագամ աղանդներն ու քաղցրեղէնները, միաժամանակ իրարու փոխանցելով իրենց շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները:

Հրաւիրեալները սրահէն բաժնուեցան լաւագոյն տպաւորութիւններով, իրենց հետ տանելով առաջնորդ սրբազան հօր բաշխած փոքր աղօթագիրքերն ու այլ նուէրներ: Գնահատելի ձեռնարկ մը՝ որուն համար կ'արժէ շնորհաւորել կազմակերպիչ յանձնախումբն ու մասնաւորաբար Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը:

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԱՌԱԶԻՆ ՅԻՆԳ ՄԻԼԻՈՆԻՑ ԱՅՆ ԿՈՂՍ

«Ինձ մի հարցրէ՛ք, թէ ինչպէս եմ աշխատել իմ առաջին մէկ միլիոնն տողարը, մնացածի մասին՝ խնդրեմ»... ամերիկեան յայտնի գործարար Հենրի Ֆորդին վերագրուող այս խօսքերը մի ժամանակ մոռալիկ էին Հայաստանի օլիգարխների շրջանում: Ժամանակի հետ Հայաստան հասած այս բանաձեւը տրամաբանական է, որովհետեւ, երբ մենք սկսեցք մեր գործարարներից հարցնել նրանց առաջին մէկ միլիոնի մասին, դրա արդիւնքում նրանց փոխարէն ուրիշներն են նոյն մեթոտով իրենց առաջին մէկ միլիոնը աշխատելու, եւ, փաստօրէն, այդ պայքարի արդիւնքը լինելու է այն, ինչը վերացնելու համար սկսուել է: Եւ Հայաստանը կարծես թէ իրօք կարողացաւ շրջանցել առաջին միլիոնների վերատուգման գալթակողութիւնը, եւ յամենայնդէպս այսօրինակ տեսանկիւնը դրսեւորումներ չեղան:

Բայց կարեւորը ոչ թէ սա է, այլ այն, թէ ինչ եղաւ յետոյ: Իսկ յետոյ «անձեռնմխելի գումարներ» չափերը սկսեցին մեծանալ. հանրութիւնը ոչ միայն առաջին, այլ եւ երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ եւ միւս միլիոնների մասին սկսեց հաշիւ չպահանջել: Արդիւնքը եղաւ այն, որ Հայաստանի օլիգարխները, արդէն չգոհանալով իրենց առաջին մէկ միլիոնի անձեռնմխելիութիւնով, սկսեցին քաղաքական անձեռնմխելիութիւն փնտռել, որպէսզի իրենց «Համերները» մեր վրայով անարգել քշելու արտօնութիւն ստանան: Եւ ստացան: Իսկ առաջիկայ ընտրութիւնների քաղաքական օրակարգը սահմանափակուելով է հենց այս շեղտադրմամբ, եւ մենք, իշխանական այս կամ այն ուժին իշխանութիւնը պահպանելու հնարաւորութիւն տա-

լով, ընդամէնը նրան օժտելու ենք մեր վրայով «Համերներ» քշելու անսահմանափակ լիազօրութեամբ: Իհարկէ, սա կործանարար ընթացք է, իսկ այս ընթացքի կասեցումը՝ Հայաստանի քաղաքական օրակարգի թիւ մէկ խնդիրը: Բայց լընթացս մենք պէտք է հասկանանք, որ այս իրավիճակի արմատական փոփոխութեան հասնելու համար մենք, այնուամենայնիւ, յանգելու ենք միլիոնների վերատուգման անհրաժեշտութեանը:

Ֆորդը ասում էր՝ ինձ մի հարցրէ՛ք իմ առաջին մէկ միլիոնի մասին. մենք մեր հայրենի օլիգարխներին կարող ենք աւելի լաւ պայմաններ առաջադրել՝ ոչինչ չհարցնել նրանց առաջին հինգ միլիոնների մասին: Մնացածը դրամ առ դրամ պէտք է քննութեան ենթարկուել, եւ այդ ժամանակ մենք կը պարզենք, թէ ինչ է թաքտութեան մեծաքանակ «Համերները», սափորակուելների բանաւորներ, 25-30 հազարանոց շորերի տակ: Չնայած հիմա էլ կուհնում ենք, որ դրանց տակ թողնուածներ թռչանք են՝ չվճարուած պարտադիր սոցիալական վճարների տեսքով, ուսուցիչների աշխատավարձեր են՝ չվճարուած հարկերի տեսքով, պետութեանը հասցուած միլիարդների վնասներ են՝ կեղծ արտահանումների եւ օֆշորային կեղծ ֆիրմաների տեսքով: Եւ այդ ժամանակ փաստացի հնարաւոր կը լինի ապացուցել, որ այսօր կարտֆիլ եւ տուկի թել բաժանողները ընդամէնը ժողովրդին են վերադարձնում նրանից գողացածի մի չնչին, փոքր չափաբաժինը, որը համամասնաբար կարելի է համեմատել «Համեր» պահեստային անուաղողի հետ:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

ՌՈՒՑԵՐԴ ՔՈՉԱՐԵԱՆԸ ՓՈԽՈՒԵԼ Է

Ռոբերդ Քոչարեանի 2006 թուականի Դեկտեմբերի 31-ի Ամանորեայ ուղերձը 10-րդ էր Հայաստանի Հանրապետութեան նախագահի կարգավիճակում եւ երրորդը ՀՀ խորհրդարանի ընտրութեանն ընդառաջ: Ռոբերդ Քոչարեանը այս տաս տարում փոխուել է: Հակասորէն: Ի դէպ, Հայաստանի Հանրապետութեան նախագահի պաշտօնական կայքում 1998-ը ամփոփող եւ 1999 դիմաւորող Ամանորեայ ուղերձը չկայ: Այդ պատճառով համեմատենք խորհրդարանի ընտրութեան նախօրեակի՝ 2002 թուականի Դեկտեմբերի եւ 2006 թուականի Դեկտեմբերի Ամանորեայ ուղերձները: Միակը, ինչու հաստատ է Ռոբերդ Քոչարեանը, մաղթանքներն են հայրենակցներին, ովքեր 2002-ին սիրելի են եղել, 2006-ին՝ յարգելի: 2002-ին Ռոբերդ Քոչարեանը մաղթել է՝ «Թող 2003 թուականը առողջութիւն, համերաշխութիւն եւ յաջողութիւն բերի ամէն մի տուն»: 2006-ին էլ գրեթէ նոյնը «Մաղթում եմ, որ 2007 թուականը ձեր ընտանիքների համար լինի առողջութեան, ուրախութեան եւ լիութեան տարի: Թող նոր տարին յաջողութիւն ու երջանկութիւն բերի ձեր օջախներին»:

2002 թուականին Ռոբերդ Քոչարեանը գիտեր, որ «դեռ կան երեխաներ, որ ապրում ու սովորում են ոչ բարուք պայմաններում: Կան ծնողներ, որ դժուարութեամբ են հայթայթում իրենց ընտանիքների հայր: Կան մեծահասակներ, որոնց կեանքի պայմանները դեռեւս հեռու են բաւարար լինելուց: Հաւատացնում եմ ձեզ, որ կարճ ժամանակ անց ձեր հոգեւոր հայտնի կը թեթեւանան: Յատուկ գնահատանքի են արժանի մեր կանայք՝ մեզ նեցուկ դժուարին պահին եւ միշտ հմայիչ ու կանացի: Ձեր լաւատեսութեամբ եւ համբերատարութեամբ է ամուր ընտանիքը, ուրեմն եւ՝ երկիրը: Այսօր առաջին անգամ Նոր Տարին նոր յարկի տակ են դիմաւորում երկրաշարժից տուժած հազարաւոր ընտանիքներ: Ես չնորհաւորում եմ բոլորին: Հաւատացէ՛ք, որ Հայաստանի հիւսիսում մենք ունենալու ենք զարգացման գօտի»: Իսկ ահա 2006-ին արդէն վատահ էր, որ տարին «եղաւ խաղաղ եւ արդիւնաւէտ: Երկիրը շարունակեց կայուն զարգացումը: Դրա շնորհիւ գալիք տարում եւս շեղտակիօրէն կ'աճի պետական բիւջէն, հետեւաբար՝ կը բարձրացուեն աշխատավարձերը, թոշակները եւ նպատները: Նախանշուած են եւ կ'իրականացուեն սոցիալական ծրագրեր, որոնք ուղղուած են լինելու մեր քաղաքացիների կեանքի որակի բարձրացմանը»: Նշանակում է, որ ըստ Ռոբերդ Քոչարեանի, արդեն իրականացել են 2002-ին բարձրաձայնուած համոզմունքները՝ Հայաստանի հիւսիսում կայ զարգացման գօտի եւ այլն:

Ղարաբաղի հարցում: 2002-ի Ամանորեայ ուղերձում Ռոբերդ Քոչարեանը նշել է. «Անցնող տարում մենք շարունակեցինք մեր ջանքերը ուղղուած Լեռնային Ղարաբաղի ինդրի կարգաւորմանը: Այս հարցում մեր տեսակէտները միջազգային հանրութեան կողմից երբեք այնքան լսելի եւ ընկալելի չեն եղել, որքան այսօր»: Իսկ 2006-ի Ամա-

նորեայ ուղերձում ասել է. «Շարունակուեցին նաեւ զարգացման բանակցութիւնները: Դրանց արդիւնքում պէտք է ամրագրուեն ԼՂՀ փաստացի գոյութիւնն ու Արցախի ժողովրդի ազատ եւ անվտանգ ապրելու իրաւունքը: Արցախցիների վճռական դիրքորոշումը եւս մէկ անգամ արտայայտուեց սահմանադրական հանրաքուէում»:

Բայց ամենահետաքրքիրը սպասուող ընտրութիւնների վերաբերեալ Ռոբերդ Քոչարեանի դիտարկումներն են: 2002-ի վերջում նա յայտարարում է, թէ «Եկող տարի տեղի են ունենալու նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններ: Սրանք մեծ իրադարձութիւններ են մեր երկրի կեանքում: Լիալոյս եմ, որ ընտրութիւնները կ'անցնեն այնպէս, ինչպէս վայել է կազմակերպուած եւ քաղաքակիրթ ժողովրդին: Ոչ բոլորն են դա ցանկանում, եւ մենք պարտաւոր ենք զգօն լինել»:

Իսկ 2006-ի վերջում՝ «2007 թուականին կայանալու են խորհրդարանական ընտրութիւններ: Համոզուած եմ, որ դրանք կ'անցնեն պատշաճ մակարդակով: Ազատ եւ արդար ընտրութիւնների անցկացումը պէտք է առաջնահերթութիւն լինի իւրաքանչիւրիս համար»:

Թէ ինչու էր Ռոբերդ Քոչարեանը 2002-ին միայն լիալոյս, իսկ 2006-ին՝ համոզուած, միայն ինքը գիտի: Ճիշդ նոյն տրամաբանութեամբ միայն ինքը գիտի, թէ ինչ նկատի ունի, երբ ասում էր «ընտրութիւնները կ'անցնեն այնպէս, ինչպէս վայել է կազմակերպուած եւ քաղաքակիրթ ժողովրդին», կամ «ընտրութիւնները կ'անցնեն պատշաճ մակարդակով»: Կամ ինչու 2003-ին կային անկազմակերպ ու ոչ քաղաքակիրթ ընտրութիւնների կողմնակիցներ, իսկ 2007-ին՝ արդէն չկան:

ԱՐԱՄ ԶԱՔԱՐԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»

ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԳԻՆԸ

Երբ ես 14 տարեկան էի, ինձ համար հեղինակութիւններ էին Դիքենսը, Բալզակը, Հիւգոն: Ոչ միայն ինձ համար, այլ եւ Հայաստանի հազարաւոր ղեռահասանների: Այսօրուայ 14 տարեկանների համար այդպիսիք են, մասնաւորապէս, Սուսիկը, Միհրանը եւ մնացածները: Ովքեր չգիտեն՝ ասեմ, որ նրանք «Հայտուպերսթար» մրցոյթի հերոսներն են, որոնք ամանորեայ տօներին օրուգիշեր «Շանթի» էկրանին էին: Նոյնիսկ «Միլիոնատէր» էին խաղում՝ իրենց գիտելիքներով եւ ինտելեկտով օրինակ ծառայելով մնացած ղեռահասաններին: «Հայտուպերսթարը» «Շանթի» ամենայնոցը նախագծերից է, բարձր վարկանիշ ունի, եւ շատ բնական է, որ հեռուստաընկերութիւնն այդ նախագծից «քամում» է այն, ինչ կարող է: Առաւել եւս մեղադրելի չեն մասնակիցները, որոնք հիմնականում շատ համակրելի երեխաներ են: Ինքնագործունէութիւնը մնում է այդպիսին՝ ինչպիսի «սուպեր» անուններ էլ ունենայ: Պատանիներն ու աղջիկները պարտաւոր չեն լաւ երգել, առաւել եւս՝ Սպինտզայի մակարդակի խորը մտքեր արտայայտել: Տասնամեակներ առաջ խորհրդային Միութիւնում էլ կար «Ալօ», մենք փնտռում ենք տաղանդներ» հաղորդաշար: Այդ «փնտռութիւն» մէջ մի քանիսր դարձան բարձրակարգ երաժիշտ (մասնաւորապէս՝ էլլիոն Մակարեանը), մնացածները գտան այլ գրադոմոնք: Բայց ոչ մէկի մտքով չէր անցնում այն ինքնագործ երգողներին ընկալել որպէս կուռք, գե-

րաստղ, հեղինակութիւն: Հարցն էլ հենց այն է, թէ ինչու է դա այսօր տեղի ունենում: Հաւանաբար մեխանիզմը նոյնն է, որը գործում է բոլոր տեսակի «բարի» կամ «չար» վիճակախաղերի դէպքում, մարդկանց գրաւում է հեշտութեամբ տրուող յաջողութիւնը: Որեւէ մասնագիտութեան (այդ թւում՝ երգի) բարձունքներին հասնելու համար մարդը պէտք է պատրաստ լինի ինքնագրկանքների, տարիներ տեսլող ամենօրեայ տաժանակիր աշխատանքի: Իսկ «սուպերսթար» դառնալու համար հարկաւոր է ընդամէնը լաւ ֆենէլ (կամ հակառակը՝ խուճուճացնել) մագերը, հետաքրքիր շոր հագնել, սովորել մի քանի երգ եւ յաճախ երեւալ հեռուստաէկրանին: Լսարանին (հիմնականում՝ երիտասարդ) գերում է այդ՝ էժան գնով «վաստակած» յաջողութիւնը, որը մղում է ղեռահասաններին իւրատեսակ ինքնահաստատման՝ մենք էլ ենք ուզում, մենք էլ ենք կարող:

Եթէ ամէն ինչ սահմանափակուէր երգով եւ ղեռահասաներով, գուցէ չարժեր էլ դրա մասին գրել: Բայց հեշտութեամբ տրուող յաջողութեան մեխանիզմը գործում է մեր կեանքի բազմաթիւ այլ ոլորտներում: Պատահականօրէն յայտնուեցիր սեփականաշնորհուող ձեռնարկութեան կողքին՝ դարձար օլիգարխ: Կարողանում ես քծնել իշխանութեանը՝ դառնում ես ակահեմիայի թղթակից անդամ, նոյնիսկ թէք գիտութեան հետ կապ չունես: Յաջողուած է մուրացկանութիւն անել՝ քեզ նուիրում են հե-

ուստացոյց: Դրանք արդէն մեծերի խաղերն են: Նոյնիսկ, կարելի է ասել՝ պատաների:
ԱՐԱՄ ԱՔՐԱՀԱՄԵԱՆ
«ԱՌԱԻՕՏ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԻԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԻԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԸՆԶԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Յեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party of
Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ՎԱԽՃԱՆՈՒԵԼ Է ԱԼԵՔՍԱՆ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Յուճուար 9-ին 88 տարեկան հասակում վախճանուել է Հայաստանի յայտնի պետական գործիչ Ալեքսան Կիրակոսեանը:



Նախկին յայտնի պետական գործիչ Ալեքսան Կիրակոսեան

Ալեքսան Կիրակոսեանը 70-ական թուականներին եղել է Հայաստանի Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ, իսկ այնուհետև մօտ մէկ տասնամեակ զբաղեցրել է Նախարարների խորհրդի ղեկավարի առաջին տեղակալի պաշտօնը:

Նա մեծ դերակատարութիւն է ունեցել սնտեսական եւ կադրային քաղաքականութեան հարցերում, յայտնի է եղել իր ազգանուէր դիրքորոշմամբ:

Ալեքսան Կիրակոսեանը յայտնի է հայ հասարակութեանը որպէս արուեստասէր գործիչ: Նա ընկերութիւն է արել Համօ Սահեանի, Վահագն Դաւթեանի, Սիլվա Կապուտիկեանի եւ բազմաթիւ այլ յայտնի արուեստագէտների հետ:

Կազմուել է Ալեքսան Կիրակոսեանի թողման կառավարական յանձնաժողով վարչապետ Անդրանիկ Մարգարեանի գլխավորութեամբ:

Ալեքսան Կիրակոսեանի մահ-

ուան կապակցութեամբ այսօր ցաւակցական հեռագիր է յղել Ռոբերտ Քոչարեանը:

«Մեծ է Ալեքսան Կիրակոսեան պետական գործիչի վաստակը մեր երկրի զարգացման գործում: Երկար տարիների նրա եռանդուն եւ արդիւնաւէտ գործունէութիւնը հայրենանուէր աշխատանքի օրինակ է: Անկախութեան հռչակումից ի վեր նա իրեն դրսևւորեց նաեւ որպէս ակնառու հասարակական գործիչ, որին բնորոշ էին յստակ քաղաքացիական դիրքորոշումն ու սկզբունքայնութիւնը», - ասուած է Կիրակոսեանների ընտանիքին հասցէագրուած հեռագրում:

ԻՐԱՆԸ ՊԱՏՐԱՍ Է ՍԿՍԵԼ ԳԱԶԻ ԱՌԱՔՈՒՄԸ ՎԱՅԱՍԱՆ



Տեսարան մը Իրան-Հայաստան գազամուղի խողովակներէն

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Իրանը պատրաստ է սկսել գազի առաքումը Հայաստան ցանկացած պահի, սակայն Հայաստանը դեռեւս պատրաստ չէ գազը ստանալ, հաղորդում է Iran Daily-ն:

Նախագծի իրականացման պատասխանատու Մոհամադ Ռեզա Լորգադէն ILNA գործակալութեանը յայտնել է, որ իրանական կողմը կատարել է Հայաստան գազի առաքումն սկսելու համար պահանջուող բոլոր աշխատանքները եւ տեղադրել անհրաժեշտ

սարքաւորումները:
«Հայկական կողմը հանդիպում է խնդրել Մարտի վերջին՝ քննարկելու գազի մատակարարման նախագիծը, ինչպէս նաեւ Հայաստանից Իրան ելքադրայնորդի արտահանման հարցը», - ասել է Լորգադէն:
Նա վստահեցրել է, որ իրանական կողմը կատարել է գազամուղի կառուցման եւ Հայաստան գազի արտահանման իր բոլոր պարտաւորութիւնները եւ պատրաստ է գազ մատակարարել Հայաստանին ցանկացած պահի:

«ՖՈՐԲՍ»-Ի ՎԱՅՎԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՁԵՒՈՎ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Ինչպէս «Ազատութիւն» ռատիոկայանին երեքշաբթի օրը ասաց «Ֆորբս» ամսագրի ամերիկեան տարբերակի արտոնագրային հաւատարմատար, Հայաստանում մտաւոր սեփականութեան պաշտպանութեան ոլորտում աշխատող իրաւաբան էդուարդ Նահապետեան, «Ֆորբս»-ի հայկական տարբերակի առաջին համարը անօրինական ձեւով է լույս տեսել: Չի բացառուում, որ ամերիկեան «Ֆորբս»-ը կատարուածի համար փոխհատուցում պահանջի:

ցին, թէ հնարաւոր է, որ ամսագիրը հրատարակումը դադարեցուի, նա պատասխանեց. - «Չեմ կարող ասել: Ժամանակը ցոյց կը տայ»:

«Ֆորբս - Հայաստան» ամսագրի առաջին համարի լոյս ընծայումից յետոյ հրաժարական է ներկայացրել դրա գլխավոր խմբագիրը՝ «Կենտրոն» հեռուստաընկերութեան մեկնաբան Պետրոս Ղազարեանը՝ դա բացատրելով «Ֆորբս»-ի լոյս ընծայման «անհարկի քաղաքականացմամբ»:

Նա հերքեց լուրերը, թէ իր հրաժարականը պարտադրուած է եղել՝ կապուած անցած Դեկտեմբերին լոյս տեսած «Ֆորբս - Հայաստան»-ի առաջին եւ առաջմ միակ համարում տպագրուած հայաստանցի 10 մեծահարուստների մասին յօդուածի հետ:

Հարուստների տասնեակը այդ յօդուածում գլխավորում է Գագիկ Ծառուկեանը: Տասնեակի մէջ են 6 պետական պաշտօնեաներ՝ Ռոբերտ Քոչարեանը, պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը, Երեւանի քաղաքապետը, Մաքսային պետական կոմիտէի ղեկավարը, կապի ու տրանսպորտի եւ արդարադատութեան նախարարները:

Այս ցանկը վրդովմունք է առաջացրել իշխանութիւնների շրջանակում: Համարը լոյս տեսնելուց անմիջապէս յետոյ Ղազարեանը այդ ցանկը «ամանորեայ կատակ» որակեց, թէեւ ամսագրում այն ներկայացուած էր որպէս անանուն փորձագէտների շրջանում անցկացուած հարցման արդիւնք:

ՎԱՅԱՍԱՆԸ ԶԵՆՔ Է ԳՆՈՒՄ ՍԵՐԲԻԱՅԻՑ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
2007 թուականի առաջին ամիսներին Սերբիան 2,6 միլիոն տոլարի գէնք կը վաճառի Հայաստանին:

Սերբիական «Չաստավա» գործարանի կառավարիչ Դրագոյուբ Գրոյուիչը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրոյցում ասաց, որ Հայաստանին հրազէն է վաճառուում, հիմնականում՝ ակտիւստներ: Նախատեսուում է Յունուարի վերջին առաքել առաջին խմբաքանակը: Իսկ Մարտին՝ ամբողջութեամբ աւարտել մատակարարումը:

Այս անգամ, ըստ ոչ պաշտօնական աղբիւրների, Սերբիայի աւանդական գործընկեր Ռուսաստանը առարկել էր, որ Սերբիան գէնք-գինամթերքի գործարքներ իրականացնի Մոսկուայի կողմից վերահսկուող շուկաներում:

Հոկտեմբերին Սերբիայի արտաքին գործերի նախարարութիւնը, արգելք դնելով այս գործարքի վրայ, յայտարարել էր, թէ այդ գէնքը «կարող է օգտագործուել ուսմանի կամ Ռուսաստանի դէմ»:

Դեկտեմբերի սկզբին «Չաստավա» ընկերութեան ղեկավարները քննադատեցին Սերբիայի կառավարութեանը՝ Հայաստանի հետ համաձայնեցուած գործարքը արգելափակելու համար:

Հետագայ դէպքերը սրընթաց զարգացան Բելգրադից 90 քիլոմէթր հիւսիս-արեւելքում գտնուող Կրագուշենաց քաղաքում, որտեղ գտնուում է «Չաստավա» գործարանը:

«Չաստավա»-ի 2600 աշխատողներ գործադուլ յայտարարեցին՝ կառավարութիւնից պահանջելով թոյլատրել Հայաստանի հետ նախատեսուած գործարքի իրականացումը կամ տալ ֆինանսական փոխհատուցում:

Կառավարութիւնը կտրակապ պահանջները էր կատարել նրանց պահանջները:

Դեկտեմբերի 29-ին, սակայն, ըստ «Աստիէլթրո Փրես»-ի, Սերբիայի նախագահ Բորիս Տադիչը յայտարարեց, որ Հայաստանին գէնք վաճառելու հարցում Ռուսաստանը տուել է իր համաձայնութիւնը:

ՎԱՆԻԱՏԵՄԻՈՒՄ Է ՎԱՅԱՍԱՆԻ ՎԱՄԱԽԱՆՆԵՐԻՆ ԱՐԴԻԻՆԵՐԻ ԱՃԻ ՏԵՄՊԵՐԻ ԱՆԿՈՒՄ

ԱՊՀ-ի Միջպետական վիճակագրական կոմիտէն կանխատեսում է, որ Հայաստանի համախառն ներքին արդիւնքը, որն անցած տարի աճել է 12 տոկոսով, 2007 թուականին կ'աւելանայ 7-9 տոկոսով: Այդ մասին այսօր յայտնել է «Ռեզնուս» գործակալութիւնը:

Ատրպէյճանում, որտեղ անցած տարի ռեկորդային աճ էր գրանցուել՝ 34 տոկոս, այս տարի համախառն ներքին արդիւնքի աճը կը կազմի 30 տոկոս:
Վրաստանում աճը 7 տոկոսից կը նուազի մինչեւ 5 տոկոս:
Ռուսաստանում այդ ցուցանի-

չը գրեթէ չի փոխուի՝ անցած տարի այն կազմել է 6,6 տոկոս, այս տարի ԱՊՀ-ի վիճկոմիտէն կանխատեսում է 6 տոկոս:

ԼՈՒՐԵՐ

ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ ՀԱՍԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ս.Դ.Հ.Կ. «Սարգիս Տիրունի» Ուսանողական-Երիտասարդական միությունը Բաց նամակ է յղել ՀՀ ԿԳ նախարար Լեւոն Մկրտչեանին, ուր ասում է.

«Յարգելի պարոն նախարար, ինչպես եւ խոստացել էինք, Ձեզ ենք ուղարկում Ս.Դ.Հ.Կ. «Սարգիս Տիրունի» Ուսանողական-Երիտասարդական Միության կողմից անցկացրած հարցման վերլուծությունը: Վստահ ենք, որ կը կատարէք Ձեր խոստումը, եւ գործին լուրջ ընթացք կը տրուի: Այս կերպ Դուք կ'ապացուցէք, որ իսկապես մտահոգուած էք ուսանողների շահերի պաշտպանությունը եւ պատրաստ էք պատժել բուհական ախտ հանդիսացող կոռուպացրուած տարրերին»: Յիշեցնենք, որ իր տարեկերջեան ասուլիսում ՀՀ ԿԳ նախարար Լեւոն Մկրտչեանը խոստացել էր հարցման արդիւնքները ունենալու դէպքում հարցը ուսումնասիրել: Ըստ ուսանողական միության՝ «Հետազոտությունը անցկացրել է 2006 թուականի Դեկտեմբերի 10-18: Որպէս ինֆորմացիայի հաւաքման մեթոտ հանդիսացել է հարցաթերթիկային հարցումը: Մեթոտի ընտրությունը պայմանաւորուած է ժամանակի եւ ռեսուրսների սղութեան պատճառով: Պահանջում էր ստանալ փրոպլեմի մասին վիճակագրական տեղեկատուութիւն, գնահատել դրա ազդեցութեան չափերը եւ ուսանողութեան կարծիքը փրոպլեմի վերաբերեալ: Ընտրանքից դուրս են մնացել ԵՊՀ իրաւագիտութեան ֆակուլտետի եւ Ֆրիդրիխի կուլտուրայի ինստիտուտի ուսանողները: Նրանք պարզապէս չեն ցանկացել լրացնել հարցաթերթիկները: Ստուգումից յետոյ խոստանուել է 173 հարցաթերթիկ, մշակուել է 2000 հարցաթերթ: Մշակումը իրականացուել է SPSS 13 ծրագրով, վիճակագրական բացթողումը +-2»:

Ս.Դ.Հ.Կ. «Սարգիս Տիրունի» Ուսանողական-Երիտասարդական Միությունը 2006 թուականի Դեկտեմբերին նախ պարզել էր, որ «Հարցման ընթացքում մի շարք բուհերի աղմինիստրացիաների կողմից յարուցուել են արհեստական խոչընդոտներ. չեն թողել մտնել բուհ, ուսխորհրդին հրահանգել են խափանել միջոցաւումները» եւ

ասալ՝ «Չնայած յարուցուած բոլոր խոչընդոտներին, հարցման մեծ մասը անցկացուել է: Հարցաթերթիկներ են լրացրել շուրջ 2000 ուսանողներ եւ բուհերի կոռուպացրուածութեան պատկերն արդէն իսկ կայ»:

Իսկ այդ պատկերը, ըստ «Սարգիս Տիրունի» Ուսանողական-Երիտասարդական միության հարցման հետեւեալն է. «Կա՞ց բուհերում կոռուպցիա, թէ՛ ոչ» հարցին 2000 հարցուածից 1821-ը պատասխանել է «Այո, կայ կոռուպցիա»: Հարցման կազմակերպիչները բուհերը բաժանել են էլիտար եւ ոչ էլիտարների: Էլիտար բուհերի մէջ են Մխիթար Հերացու անուան բժշկական համալսարանը, Երեւանի տնտեսագիտական պետական համալսարանը եւ Բրիւսովի անուան լեզուաբանական ինստիտուտը: Ոչ էլիտարների շարքին են դասուել Գիւղակաղեմիան եւ Պոլիտեխնիկն ու Մանկավարժական: Ներկայացուում են նաեւ որոշ բուհերում հարցման մանրամասներ:

«ԵՊԱՀ/Գիւղակաղեմիա/ - 96% այո, կայ կոռուպցիա, որից 83% ասել է որ կաշառք տուել են, հարցուել է 250 ուսանող: Կաշառք տուող ուսանողներին լաւ են վերաբերում 90%-ը իսկ դասախօսներին նորմալ 90 %-ը, ստուգարքի համար 90% -ը պատասխանել է մինչ- 20\$ իսկ քննութեան համար 21-50\$:

ԵՊԲՀ/Բժշկական/ 86% այո կայ կոռ., որից 74%-ը ասել է, այո տուել են կաշառք:Կաշառք տուող ուսանողին լաւ են վերաբերում հարցուողներին 89 -ը, իսկ դասախօսներին՝ նորմալ՝ 33%-ը: Քննութեան համար մեծամասնութիւնը 200\$-ի - աւել, ստուգարքի համար՝ 100-200\$: Հարցուել է 100 ուսանող: ԵՊՃՀ/պոլիտեխնիկ/ Հարցուածների 85.5% -ը ասել է կայ կոռ., որից միայն 20% է անձամբ տուել: Կաշառք տուող ուսանողներին 70 %-ը նորմալ է վերաբերում, իսկ դասախօսներին աւելի շուտ վատ են վերաբերում 90% -ը: Հարցուել է 300 ուսանող:

Կոռուպցիայի տարածուածութեան պատճառներն ու վերացման համար առաջարկում էին զրեթէ նոյն միջոցները՝ 93% առաջարկում է բարձրացնել դասախօսների աշխատավարձը, 87%-ը ԲՈՒՀերում ներքին կարգուկանոնի խտացում»:

ՅԱՌԱՋԻԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԱՌԱՋ ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՈՐՁԷ ՄԻԱՒՈՐՈՒԻԼ

Շարունակուած էջ 1-էն

է տանելու»:

«Ազգային Միաբանութիւն» կուսակցութեան առաջնորդ Արտաշէս Գեղամեանի իր կարգին ըսած է,- «Տեղամաս առ տեղամաս հասնելու ենք նրան, որ իւրաքանչիւր ընտրող հասկանայ եւ գիտակցի՝ քուէն գողանում են իր երեխայի վաղուայ օրուանից: Եթէ ժողովուրդը իր մէջ վճռականութիւն չգտաւ եւ չթօթափեց այս ապագային իշխանութիւնների բեռը, կը նշանակի՝ նա արժանի է այն ճակատագրին, որում նա արդէն յայտնուել է»:

Գեղամեան հաստատած է շրջանառուող այն լուրերը, թէ իր ղեկավարած կուսակցութիւնը խորհրդարանական ընտրութիւններուն դաշինքով մասնակցելու կապակցութեամբ բանակցութիւններ կը վարէ յատկապէս Հա-

յատանի Ժողովրդական Կուսակցութեան (ՀԺԿ) հետ. «Ժողովրդական Կուսակցութեան հետ որոշակի քննարկումներ այդ ուղղութեամբ եղել են, բայց խօսքը գնացել է նախ եւ առաջ՝ անել ամէնը, որ ապահովուեն առաջիկայ ընտրութիւնների ժողովրդավարական ընթացքը, օրինականութիւնը եւ բացառուեն ընտրակեղծիքները»:

«Արդարութիւն» դաշինքին մաս կազմող «Մասնադրական իրաւունք» միութեան նախագահ Հայկ Բաբուխանեան յայտնած է թէ, իրենց մօտ բացառուած չէ «Օրինաց Երկիր» եւ Լեւոնային Ղարաբաղի պաշտպանութեան նախկին նախարար Սամուէլ Բաբաեանի «Դաշինք» կուսակցութեան հետ համագործակցութեան կարելիութիւնը, սակայն՝ «Արդարութիւն» դաշինքը պահպանելու շուրջ քննարկումները աւարտուել յետոյ միայն:

Լիբանան ՌՉ ԵՄ Է ՎԱՐԴԻՎԱՌ ՏԵՐ-ՎԱԼՈՒՍՏԵԱՆ

Խոր ցաւով իմացանք Սին էլ Ֆրիլի քաղաքապետութեան Խորհուրդի երկարամեայ անդամներէն եւ լիբանանապալութեան ընկերային, կրթական, մարզական եւ մշակութային կեանքին նուիրուած տիպար եւ անխտրական անձնաւորութիւն՝ Վարդիվառ Տէր-Պալուստեանի մահը, որ տեղի ունեցած է Պէյրութ, Երեքշաբթի 10 Յունուար 2007-ին, կէսօրին, յետ երկարատեւ հիւանդութեան: Յուղարկաւորութեան տխուր արարողութիւնը տեղի կ'ունենայ յաջորդ օր, Չորեքշաբթի 11 Յունուար կ.վ. ժամը 3.00-ին Անթիլիասի Մայրավանքին մէջ:

Ողբացեալը Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան եւ Սահակեան Լեւոն Մկրտիչեան Գոլէճի (Լիբանան) ծառայութեան մէջ գտնուած է միշտ: Ան նաեւ, «Մասիս» շաբաթթերթի Չերմ ընթերցողներէն, բարեկամներէն, քաջալելողներէն հանդիսացած է միշտ, անգամ իր առողջական վատ տարիներուն:

«Մասիս» իմբագրութիւնը այս տխուր առիթով, կը յայտնէ իր խորագգած վշտակցութիւնը ողբացեալի ընտանեկան, ազգականական, քաղաքապետական եւ բարեկամական բոլոր պարագաներուն:

2007-ԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԸ ԿԱԶՄԻ ՍՕՏ 10 ՏՈԿՈՍ

Հայաստանի Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսեանը ԱՌԿԱ գործակալութեանը տուած հարցազրոյցում յայտնել է, թէ 2007թ. Հայաստանի տնտեսական աճը կը կազմի մօտ 10 տոկոս: Նրա կարծիքով, բոլոր այն նախագծերը, որոնք արդէն մեկնարկել են, կ'աւարտուեն 2007թ., եւ միայն դրանց իրագործումը կ'ապահովի այդ աճը:

ուսուցիչների ոլորտը, հանքարդիւնաբերութիւնը: Միւս կարեւոր ուղղութիւնը, Տիգրան Սարգսեանի խօսքով, քիմիական արդիւնաբերութիւնը լուրջ ծրագրեր է իրագործում Նաիրիտի եւ Վանաձորի քիմիական համալիրի գործարկման ուղղութեամբ: Եթէ այս երկու հսկաները աշխատեն, իրենց հերթին կը խթանեն մօտ 200 փոքր եւ միջին ձեռնարկութիւնների գործունէութիւնը, որոնք սպասարկում են դրանք, ասել է ԿԲ նախագահը:

ՄԲ. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՄԲ. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԷՋ

Շարունակուած էջ 1-էն

էջմիածնի միաբան Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Պողոպալեան: Պատարագէն յետոյ կատարուեցաւ նախատօնակ, որու աւարտին Նորին Սրբութիւնը աւետեց Քրիստոսի Սուրբ Մշունդն ու Աստուած յայտնութիւնը: Արարողութեան աւարտէն յետոյ Մայր Տաճարի բակը ողողուեցաւ հարիւրաւոր մոմերու լոյսերով, որ հաւատացեալները կը տանէին իրենց հետ՝ լուսաւորելու սեփական յարկերը:

հոգեւորը, հաւատքն ու սրբութիւնը, այլ, նոյնիսկ, ծաղրում է: Ունայն պիտի լինեն խաղաղութեանը, արդարութեանն ու մարդասիրութեանը ուղղուած ջանքերը, եթէ նախ Աստուծոյ բարերար Կամքը եւ Փրկութեան Շնորհը չենք հայցում, միմեանց սիրելու աստուածադիր պատուիրանը չենք կատարում»,- ըսաւ Վեհափառը իր քարոզին մէջ: (Կաթողիկոսի խօսքը տեանել առանձին):

Յունուար 6-ին մեծ էր տօնական խանդավառութիւնը համայն հայ ժողովրդի հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սբ. էջմիածնէն ներս: Միածնայէջ Մայր Տաճարին մէջ Հայրապետական Սբ. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ. Պարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Խաչերով ու խաչուառներով զարդարուան հայրապետական թափօրը «Խորհուրդ խորին» շարականի երգեցողութեամբ եւ ամպհովանիի ներքոյ Ամենայն Հայոց Հայրապետին առաջնորդեց դէպի Մայր Տաճար՝ Սուրբ Պատարագ մատուցելու եւ տօնի առիթով իր պատգամը յղելու համայն հայութեանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ էջմիածնէն եղբայրական սիրոյ իր ողջոյնները յղեց քոյր Եկեղեցիներու հոգեւոր պետերուն, Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրապետական աթոռներու գահակալներուն՝ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ս. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մովսէֆեանին. հայրապետական իր օրհնութիւնն ու սէրը յղեց ի սփիւռս աշխարհի համայն հայ ժողովրդին:

Նորին Սրբութիւնը իր պատգամին մէջ յորդորեց ապրել սիրով՝ Արարչին ապաւինած: «Արդարեւ, գիտատեխնիկական արդի նուաճումները, ժողովրդավարութիւնը, անհատի եւ ազգի իրաւունքներն ու ազատութիւնները գերակայ արժէքներ հռչակած գաղափարախօսութիւնները անբաւարար եղան պատասխաններ տալու մարդկութեան առջեւ ծառայող խնդիրներին ու մարտահրաւերներին եւ անբաւարար պիտի լինեն, եթէ Աստուած չի բնակուած մեր մէջ, եթէ Աստուած չի գործում մեր կեանքում, եթէ չի կարեւորում

Յաւարտ Սբ. Պատարագի Նորին Սրբութիւնը կատարեց Ջրօրհնէքի արարողութիւն՝ իբրեւ Քրիստոսի Մկրտութեան խորհրդանիշ: Այս տարի Ջրօրհնէքի խաչի կնքահայրն էր վաստակաւոր երգահան Տիգրան Մանուկեան:

Սբ. Պատարագին եւ Ջրօրհնէքի արարողութեանը ներկայ էին ՀՀ Աժ նախագահ Տիգրան Թորոսեան, ՀՀ նախարարներ, պետական այլ բարձրաստիճան պաշտօնեաներ, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամներ, Հայաստանի մէջ հաւատարմագրուած օտարերկրեայ դիւանագէտներ, գիտութեան ու մշակուցի նուիրեալներ:

Սրբագան Պատարագէն յետոյ Վեհարանին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն:

ՎԱՐՑԱԶՐՈՅՑ

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆ. «ԻՆՁ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ՉԵՄ ՏԵՍՆՈՒՄ»

«Ազատութիւն» ռադիոկայանի գրասենեակը հիւրընկալել էր Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանեանին, ով պատասխանել է ռադիոկայանի թղթակիցների հարցերին:

Յարգ. - Ո՞ւմ օգտին կարող է լինել դարաբաղեան կարգաւորման բանակցային գործընթացի ձգձգումը՝ Յայաստանի, Ատրպէյճանի, Լեռնային Ղարաբաղի՞:

Պատասխան. - Ինչքան շուտ լուծուի Ղարաբաղի հարցը, այնքան բոլորի օգուտն է. այստեղ կասկած ուղղակի չի կարող լինել: Խնդիր դնելով հարցը լուծել՝ պէտք է փորձել կոմպրոմիսների տարբերակով առաջ գնալ: Մենք ունենք մեր յստակ խնդիրները, գիտենք մեր կոմպրոմիսի սահմանները, գիտենք այն կարմիր գիծը, որից չենք կարող անցնել: Հետեւողականորէն աշխատում ենք այն ուղղութեամբ, որ հասնենք հարցի կարգաւորմանը: Եթէ ստացուի է՝ գնում ենք, եթէ չի ստացուում՝ մեր առաջ խնդիր է ծագում պահպանել այսօրուայ ստատուս քվոն:

Յարգ. - Տեսակէտ կայ, որ Լեռնային Ղարաբաղը այսօր հակամարտութեան սուբիեկտից վերածուել է հակամարտութեան օբիեկտի: Լեռնային Ղարաբաղի իշխանութիւնները երբեք չեն յայտարարել, թէ իրենք անվերապահօրէն կ'ընդունեն այն լուծումը, որը ընդունելի է Յայաստանի համար: Գնարաւոր է, որ որեւէ փուլում, եթէ Ղարաբաղը մտնի բանակցութիւններին մէջ, հակասութիւններ առաջանան Յայաստանի եւ Ղարաբաղի իշխանութիւնների միջեւ:

Պատասխան. - Առանց Լեռնային Ղարաբաղի մասնակցութեան ինչ-որ մի փուլում, ուղղակի հնարաւոր չէ Լեռնային Ղարաբաղի հարցի կարգաւորումը: Այն, ինչ այսօր անում ենք, նպատակ ունի պրոցէսը հասցնել մի կէտի, որտեղ արդեն հիմնական սկզբունքների շուրջ համաձայնութիւն կը լինի. մանրամասների քննարկման փուլում Լեռնային Ղարաբաղի մասնակցութիւնը անպայման անհրաժեշտ է: Իսկ մինչ այդ լուրջ երկխօսութիւն կայ Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ: Լեռնային Ղարաբաղի իշխանութիւնները ամբողջութեամբ իրազեկ են: Մեծ հաշուով, ես կարծում եմ, որ սկզբունքային տարաձայնութիւններ Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ չկան:

Յարգ. - Այս տարի մարտին Գախագահ Ռոբերտ Քոչարեանը կոչոյ յայտարարութիւն արեց, որ եթէ ձգձգուեն, ձախողուեն բանակցութիւնները, Յայաստանը կը ճանաչի Ղարաբաղի անկախութիւնը: Արդեօք այդ ուղղութեամբ որեւէ գործընթաց, նախապատրաստական աշխատանք կայ: Արտգործնախարարութիւնը ինչ-որ բան անո՞ւմ է այդ առումով, եթէ յանկարծ սցենարի մնաց գարգացում լինի:

Պատասխան. - Նախագահի յայտարարութիւնը պէտք է դիտարկել հետեւեալ կոնտեքստի մէջ՝ ի՞նչ պատճառով են բանակցութիւնները ձախողուում: Եթէ Ատրպէյճանը բանակցութիւնների միջոցով չկարողանայ ստանալ այն, ինչ ցանկանում է, եւ Ատրպէյճանի համար տարբերակ է հարցը ռազմական ճանապարհով լուծել, իհարկէ Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը միասնաբար պէտք է պատրաստ լինեն այդ տարբերակին:



Երբ մենք համոզուենք, որ Ատրպէյճանը կոմպրոմիսային տարբերակով չի ուզում գնալ եւ կարող է գնալ ռազմական տարբերակի՝ 5 տարի, 10 տարի չետոյ, մենք մեր ձեռքերը ծալած չենք նստելու... Եթէ մենք համոզուենք, որ Ատրպէյճանը դրա մասին լուրջ է մտածում, ես կարծում եմ, որ ոչ միայն ճանաչման, այլ նաեւ այլ միջոցների մասին մենք պէտք է մտածենք՝ մեզ ապահովելու նման զարգացումների դիմաց: Ծանաչումը ինքնանպատակ չէ, ճանաչումը միջոց է՝ ապահովելու Լեռնային Ղարաբաղի անվտանգութիւնը Ատրպէյճանի հնարաւոր ոտնձգութիւնների դիմաց եկող տարիների ընթացքում:

Յարգ. - Երբ դեռ կառուցում էր Պաքու - Թբիլիսի - Ջեյխան մալթա-մուրը, Յայաստանի պաշտպանութեան նախարարը, ի պատասխան հարցին, թէ արդեօք դա չի կարող սպառնալիք ստեղծել մեր ազգային անվտանգութեանը, թեքել մտարը Ղարաբաղեան խնդրի տեսանկյունից, ասաց, որ այդ նախագիծը ոչ միայն սպառնալիք չէ, այլեւ մենք դրանից կարող ենք օգուտներ քաղել: Կարելի է այսօր էլ, երբ մալթա-մուրը կառուցուած է եւ մալթա հոսում է, մնան պնդումներ անել:

Պատասխան. - Նախագահի առկայութիւնը սահմանափակումներ է մտցնում Ատրպէյճանի որոշումների մէջ ռազմական գործողութիւններ սկսելու առումով: Այսօր այդ որոշումը միայն Ատրպէյ-

ճանինը չէ: Այնտեղ հսկայական գումարներ են ներդրել օտար ընկերութիւններ, պետութիւններ: Կան նաեւ նախապիւն շահեր, որոնք բխում են կարեւորագոյն երկրների շահերից... Մենք, յամենայն դէպս, մեր ինքնավստահութեան չափը պէտք է յստակօրէն իմանանք, որպէսզի հետագայում փրոպլեմների առաջ չկանգնենք: Մենք պէտք է ճիշդ գնահատենք մեր հնարաւորութիւնները եւ ընդհանուր իրավիճակը: Մենք բոլոր ճակատներով պէտք է մեր դիրքերը ամրապնդենք. ե՛ւ ռազմական, ե՛ւ հոգեբանական, ե՛ւ ժողովրդավարական, ե՛ւ տնտեսական, ե՛ւ համահայկական առաւել ամուր ընդհանուր դաշտի ստեղծման:

Յարգ. - Դուք բազմիցս ասել եք, որ գալիք ընտրութիւնները գին ունեն, եւ պէտք է այս ընտրութիւնները շատ լաւը լինեն: Որտե՞ղ են այդ երաշխիքները: Վերջերս երեք ինտուստանկերութիւններին տուած հարցազրոյցում Ռոբերտ Քոչարեանը իմնականում քննադատեց ընդդիմութեանը: Ի՞նչ թուում է, որ մարդիկ սպասում էին, որ ընտրութիւնները լաւ կը լինեն: Նա իսկապէս արեց՞ ասաց, որ իրենից շատ բան կախուած չէ, կառավարութիւնը մէկ անգամ ունի ընդամենը... Այնպէս չի՞ ստացուում, որ ընտրութիւնների նախօրէին իշխանութիւնները կարծես թէ ձեռքերը լուսնում են:

Պատասխան. - Պատասխանատուութիւնը բոլորինն է: Բոլորը պէտք է պատասխանատուութիւն վերցնեն նորմալ ընտրութիւններ անցկացնելու, որովհետեւ սա արդեն կրիտիկական է մեր հետագայ անելիքների առումով, մեր հետագայ զարգացման առումով, Լեռնային Ղարաբաղի հարցի կարգաւորման առումով: Մենք այս հարցին պէտք է մօտենանք որպէս համընդհանուր, համազգային խնդիր: Շատ ենք խօսում Լեռնային Ղարաբաղի՝ որպէս համազգային խնդիր լինելու մասին: Այս երկուսը, նոյնիսկ կարող եմ ասել, որ կարելի է նոյն հարթակի վրայ դնել՝ տարբեր առումներով: Այս յաջորդ ընտրութիւնները մեզ համար այնքան կարեւոր են, այնքան ճակատագրական են, որ մեր քաղաքական ուժե-

րը իսկապէս իրենց նեղ շահերը մի կողմ պէտք է դնեն այս հարցում: Յարգ. - Ինչո՞ւ են ճակատագրական:

Պատասխան. - Որովհետեւ թէ Ղարաբաղի հարցի լուծումը, թէ մեր մրցունակութիւնը տարածաշրջանում մեծապէս կախուած են իշխանութիւնների օրինականութիւնից: Եւ ժողովուրդը պէտք է կասկածներ չունենայ, որ խորհրդարանը եւ նախագահը հենց իր ընտրածն են:

Յարգ. - Ինչո՞ւ պէտք է միջազգային հանրութիւնը այս անգամ աւելի խիստ արծագանգի վատ ընտրութիւններին:

Պատասխան. - 2003-ը 2007-ի հետ համեմատել չի կարելի: Այսօր մենք ունենք Եւրամիութեան հետ գործողութիւնների ծրագիր, որը առաջիկայ 5 տարիներին նախատեսում է 100 միլիոն եւրօ, մենք ունենք ԱՄՆ-ի հետ «Հազարամեակի մարտահրաւէրներ» ծրագիր, որը նախատեսում է այդ նոյն 5 տարիների համար 250 միլիոն դոլար: Մենք ունենք ՆԱԹՕ-ի հետ համապատասխան ծրագրեր: Եւ այս բոլոր ծրագրերի հիմքում դրուել են Հայաստանի ժողովրդավարութեան խնդիրները, նորմալ ընտրութիւնների անցկացման խնդիրը: Այդ իսկ պատճառով, երբ ես ասում եմ, որ այս ընտրութիւնները գին ունեն, խօսքը ոչ միայն բարոյական, այլեւ նիւթական գնի մասին է:

Յարգ. - Իսկ դուք մասնակցելու եք խորհրդարանական ընտրութիւններին:

Պատասխան. - Կարծում եմ, որ ոչ: Այս պահի դրութեամբ որեւէ առաջարկ չունեմ եւ ինձ խորհրդարանում չեմ տեսնում: Ուղղակի ուզում եմ, որ քաղաքական դաշտում իմ մնալու հնարաւորութիւնները բաց մնան, որպէսզի իմ ընտրութիւնը չսահմանափակեմ, երբ պահը դա որոշում կայացնելու:

Յարգ. - Իսկ ի՞նչ կ'աւտք նախագահական ընտրութիւնների մասին: Ասում են, որ եթէ իշխանութիւնները տեսնեն, որ Սերժ Սարգսեանը չի անցնում առանց խախտումների, առաջ

Մար.ը էջ 19

HOMENMEN PRESENTS

BIG BEAR 2007

January 13-15, 2007

HOMENMEN is hosting it's annual Big Bear Winter Trip. Bring your family and friends along and join the fun from Saturday January 13 to Monday January 15 (Martin Luther King Holiday).

**\$125/Adult
\$85/Child**

**Includes:
Room/Board
Food
Games
Live Music**

FOR RESERVATIONS
CONTACT: Razmig 818-590-2824

Z.U.U.

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ԸԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՍԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

ՅանուԱն Յոր և Որդւոյ եւ Յոգւոյն Սրբոյ. ամէն: «Եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է» (Բ Կորնթ. Ե 17):

Սիրելի բարեպաշտ հաւատացեալներ, Այսօր տօն է Սուրբ Ծննդեան, տօն է Աստուածայայտութեան մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Յիսուս Քրիստոսի: Մեծ ու սքանչելի է խորհուրդը, որը մենք վերադառնալով կ'ապրենք: Նոր Արքայ ծնունդը Բեթղէհէմում՝ յանուն նորոգ մարդու եւ նոր աշխարհի, քանզի «Եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է»:

Հայոց Բեթղէհէմից, լոյս խորանից Սուրբ էջմիածնի, հոգևորոգ գոգացումներով եւ բերկրանօք բերում ենք ձեզ մեծ աւետիսը, որը շուրջ երկու հազար տարիներ առաջ հովիւներին տուեցին հրեշտակները. «Այսօր Դաւթի քաղաքում ձեզ համար ծնունդ է մի Փրկիչ, որ օծեալ Տէրն է» (Ղուկ. Բ 11):

Հովիւները պարզ ու մաքուր սրտով Բեթղէհէմի մտերում ճանաչեցին ու երկրպագեցին Մանուկ Փրկչին, իմաստուն մոգերը ընծաներ մատուցեցին՝ ծնրադրելով Նրա Աստուածութեանը, Թագաւորութեանն ու Քահանայութեանը:

Փրկչի գալուստը՝ նախապէս վկայուած մարգարէների միջոցով, աւետուեց բոլորին, բայց բոլոր սրտերում չէ, որ Աշխարհի Փրկչի, Նոր Արքայի ծնունդը ցնծութեամբ ընդունուեց: Մանուկ Յիսուսին սպանելու նպատակով Հերովդէսը կոտորել տուեց Բեթղէհէմի մանուկներին: Այո, սիրելիներ, Աստուածորդու մարդեղացումն ու ծնունդը նոյնիսկ, ուղեկցուեց աստուածապաշտութեան եւ սպանութեան, խաղաղութեան ու պատերազմի իրողութիւններով, որոնք Աբելից եւ Կայենից սկսած զուգահեռ ընթացքով դրսևելուում են մարդկութեան պատմութեան մէջ: Բեթղէհէմի մտերում ծնունդը Մանուկը եկաւ փոխելու աշխարհի այդ ընթացքը Նոր Ուխտի հաստատումով եւ իր արեան յեղումով. «Այս է Նոր Ուխտի իմ արիւնը, որ կը թափուի շատերի համար» (Մարկ. ԺԴ 24), եւ ասաց Քրիստոս: Փրկիչը եկաւ ազատելու մարդուն չարի որոգայթներից, մեղքի ու մահուան կապանքներից - աստուածային իր գորութեամբ վերականգնելու նրան դրախտային երանական իր փառքի մէջ: Քրիստոս նոր կեանք բերեց աշխարհին՝ վերածնունդ, նորոգում հոգու կեանքը, որով մարդկութիւնը պիտի ընթանար դէպի Աստուած: «Հագէ՛ք նոր մարդը, - պատգամեց առաքեալը, - նոր մարդը, որ ստեղծուած է ըստ Աստուծո՛ւ՝ արդարութեամբ եւ ճշմարիտ սրբութեամբ» (Եփ. Դ 24):

Մարդկութեանն ուղղուած նորոգուելու եւ կատարելագործուելու կոչը, սակայն, ամբողջապէս վերջ չզրեց հին մարդու, հին հասկացութիւնների գոյութեանը, եւ չվերացաւ չարիքն աշխարհից: Այսօր էլ յաճախ նոր մարդու կերպարի ներքոյ գործում է հին մարդը, Քրիստոսին երկրպագող հովիւների եւ մոգերի բարեպաշտութեան կողքին տեղ է գտնում նաեւ Հերովդէսի չարագործութիւնը: Կեանքի առաջագնաց պայմաններով, հարաւորութիւններով ու կարողութիւններով յատկանշուող արդի աշխարհը դեռ ամոքուած չէ թշուառութիւններից, արհաւիրքներից ու պատերազմներից, ամոքուած չէ կեղծիքից, նախանձից ու ատելութիւնից: Մարդը բարձրացաւ տիեզերք, բայց որքա՞ն է բարձրացել իր ներաշխարհի տիեզերքում: Գիտական մտքի զարգացումը նպաստել է կեանքի բարօրութեանը, բայց որքա՞ն կատարելագործել է նաեւ պատերազմի գէնքերը: Արդարեւ, գիտատեխնիկական արդի նուաճումները, ժողովրդավարութիւնը, անհատի եւ ազգի իրաւունքներն ու ազատութիւնները զերակայ արժէքներ հռչակած գաղափարախօսութիւնները անբաւարար եղան պատասխաններ տալու մարդկութեան առջեւ ծառայող խնդիրներին ու մարտահրաւիրներին եւ անբաւարար պիտի լինեն, եթէ Աստուած չի բնակուում մեր մէջ, եթէ Աստուած չի գործում մեր կեանքում, եթէ չի կարեւորում հոգևորը, հաւատքն ու սրբութիւնը, այլ, նոյնիսկ, ծաղրուում է: Ունայն պիտի լինեն խաղաղութեանը, արդարութեանն ու մարդասիրութեանը ուղղուած ջանքերը, եթէ նախ Աստուծոյ բարեբար կամքը եւ Փրկութեան Շնորհը չենք հայցում, միմեանց սիրելու աստուածադիր պատուիրանը չենք կատարում:

«Մէրը երբէք չի անհետանում, թէ մարգարէութիւններ են, պիտի չքանան, թէ լեզուներ, պիտի լռեն, թէ գիտութիւն, պիտի անցնի, քանզի շատից քիչը գիտեմք եւ շատից քիչն ենք մարգարէանում» (Ա Կորնթ. ԺԳ 8-9), - ասում է առաքեալը: Մարդկային ամէն գիտութիւն շատից քիչն է եւ ժամանակի մէջ փոխուել ու փոխուելու է, բայց սէրն է, որ երբէք չի անհետանում, սէրը միշտ նոյնն է՝ կատարեալ, «չար բան չի խորհում,

անիրաւութեան վրայ չի ուրախանում, այլ ուրախանում է ճշմարտութեան վրայ»: Մենք բոլորս՝ ազգեր եւ ժողովուրդներ, մէկ սուրբ եւ կենարար ժառանգութիւն ունենք՝ Աստուծոյ սէրը արարածներին հանդէպ: Աստուած սիրում է մեզ բոլորիս անկախ որեւէ պատկանելութիւնից, անկախ ազգութիւնից, համոզմունքից, սեռից ու տարիքից: Կատարեալ այդ սիրոյ վկայութիւնը Փրկչի Յայտնութիւնն է աշխարհում: Սիրոյ նոյն ոգով առաջնորդուելով միայն մարդկութիւնը պիտի կարողանայ նոր լինել՝ նորացնելով նա՝ աշխարհը: Մենք՝ քրիստոնեաներս, խոստումն ու հաւատն ունենք, «Եթէ մէկը Քրիստոսի մէջ է, նա նոր արարած է»:



Սիրելի բարեպաշտ ժողովուրդ հայոց, ուրախութեամբ ու երախտագիտութեամբ ընդունենք մեր փրկութեան պարգևը՝ Մարդացեալ Աստուածորդուն: Նրան ապաւինած՝ որպէս նոր մարդ՝ արդարութեամբ ու եղբայրսիրութեամբ կառուցենք նոր կեանքը Հայաստանի - Արցախի, հայրենաշունչ, ամուր ու յոյսով լեցուն պահենք ազգային կեանքը Սփիւռքում: Փրկչի հետ չպիտի երկնչենք դժուարութիւններից ու խոչընդոտներից, եւ մեր ջանքերը իզուր չպիտի լինեն, այլ քաղցրահամ արդիւնքներ պիտի բերեն մեր Հայրենիքին եւ վերագարթօնք ապրող Սփիւռքին: Համագզային միասնութեամբ մեր Տիրոջ ազատարար սիրով պիտի պաշտպանենք Արցախի մեր ժողովրդի ազատ ապրելու արդար իրաւունքը եւ նորոգեալ հաւատով պիտի մարմնաւորենք եւ կեանքի կոչենք մեր բոլոր իղձերը, գալիքի մեր յոյսերը: Արդ, անաղարտ պահենք առաքելական սուրբ հաւատքը մեր հայրերի եւ նրանց օրինակով ստեղծենք մնայունն ու յարատեւը:

Մեր Տիրոջ եւ Փրկչի Սուրբ Ծննդեան տօնի հոգևորոգ առիթով Քրիստոսաւանդ սիրով եղբայրական ողջոյն ենք յղում Քոյր Եկեղեցիների հոգևոր պետերին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մովսէֆեանին: Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սէրն ենք բերում մեր Եկեղեցու ուխտապահ հոգևոր դասին եւ ի սփիւռս աշխարհի համայն մեր ժողովրդին:

Սուրբ Ծննդեան աւետիսով Մեր ողջոյնն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Տիրո Ռոբերտ Քոչարեանին, Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան Նախագահ Տիրո Արկաղի Ղուկասեանին, հայոց պետական ողջ աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, աղօթենք Նորածին Փրկչի սնարի առջեւ, որ իր ամենաուստ շնորհներով նորոգուեն մարդկային հոգիները եւ ողորմութեան, խաղաղութեան, արդարութեան ու ճշմարիտ եղբայրսիրութեան ճանապարհներով ուղղորդուի ժողովուրդների կեանքը:

Հացենք, որ Փրկիչ մեր Տէրը հաւատով գորացեալ պահպանի մեր ժողովրդին եւ օրհնի մեր գործերն ու ջանքերը՝ ի փառս իր Սուրբ Անուան, ի սէր եւ ի բարօրութիւն հայրենի մեր երկրի ու աշխարհափիւռ ազգիս եւ ի պայծառութիւն մեր Սուրբ Եկեղեցու. ամէն: Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ Ձեզ եւ մեզ մեծ աւետիս

Advertisement for Blue Cross of California. Features a diagram of various insurance plans (Basic PPO, PPO Saver, EPO, PPO Share, etc.) and the slogan 'The Power of Blue SM Health coverage for every household member and every household budget. Affordable plans for the whole family.' Includes the Blue Cross logo.

Advertisement for A.B.A. Insurance Services celebrating a 30th anniversary. Features a caricature of Bedros Siamanto Maronian and contact information: 818-500-9585, 805 East Broadway, Glendale, CA 91205. Includes the Blue Cross of California logo.



Mission Liquor & Wines

WE WILL BEAT ANY ADVERTISED PRICE!

Johnnie Walker Black
750ml
\$19.99



Johnnie Walker Gold
750ml
\$44.99



Johnnie Walker Red
750ml
\$14.49



Johnnie Walker Green
750ml
\$34.99



Johnnie Walker Black
1.75L
\$47.99



Johnnie Walker Blue
750ml
\$139.99



Hennessy VS
750ml
\$20.49



Grey Goose
750ml
\$20.99



Belvedere
750ml
\$21.99



Sauza Tres Generaciones
Plata 750ml
\$20.99



Sauza Tres Generaciones
Anejo 750ml
\$22.99



Russian Standard
750ml
\$13.49



Imperia
750ml
\$17.49



Hennessy VSOP
750ml
\$29.99



Stolichnaya
1.75L
\$17.99



Stolichnaya
750ml
\$13.99



Absolut
750ml
\$13.99



Level
750ml
\$17.99



Patron Silver
750ml
\$33.99



Courvoisier VS
750ml
\$16.99



Hennessy XO
750ml
\$94.99



1801 E. Washington Blvd., Pasadena, CA 91104
Liquor (626) 794-7026 • Tobacco (626) 797-0500
Corner of Allen & Washington • Open Monday—Saturday 9 am - 8 pm
www.missionliquor.com

*Minimum 12 Bottle Mix & Match • This ad expires on 01/24/07 • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice • No checks or credit cards

ALCANTARA

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ ԱԲԵՏՈՒՄԸ

ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՐԱՆԴԵՍ

«Քրիստոս Մնա եւ Յայտնեցաւ... Ձեզի Մեծի Մեծ Աւետիս...»
Տօնական օրերու մթնոլորտի մէջ սովորական է լսել այս մաղթանքը, մարդիկ իրարու այսպէս կը դիմեն, բայց այս անգամ փոքր

սուսը իր հօր եւ մօր հետ, հովիւներու ներկայութիւնը, մոգերու նուէրներու մատուցումը, Հերովդէսի զայրոյթը եւ այս բոլորը կ'աւարտէր զեղեցիկ երգեցողութեամբ մը, ուր մանկապարտէզը իր բոլոր կարելիութիւններով շարականները կ'երգէր հրեշտակային ձայնով եւ անմեղութեամբ, որը կը



Մանկապարտէզի աշակերտները ելոյթի պահուն

րիկներն են որ կ'աւետեն իրենց անմեղ հոգիներէն բխող՝ անկեղծ բառերով եւ մանկական շեշտով մը որ բոլորս պահ մը կը վերացնեն, կը փորձենք մտնել Բեթղէհէմ քաղաքի այդ համեստ մտւորը, տեսնելու Մանկացեալ Յիսուսը եւ ապրելու այդ օրերու խորհուրդով:
Նոյն մտածումներով, մեծ թիւով ծնողներ, հարազատներ դիմեցին Հայ Քոյրերու Վարժարան՝ Շաբաթ, Դեկտեմբեր 16ի առաւօտ-

դառնար միասին քան զամբողջական, երաժշտութեան ուսուցչուհի՝ Տիկ' Վարդուհի Պաղտասարեանի դաշնակի սքանչելի ընկերակցութեամբ:
Մանկապարտէզի պատասխանատու Տիկ. Սոնա Գագանճեանի օրուան պատշաճ բնաբանով եւ բարի գալուստի խօսքերով սկսած հանդիսութիւնը, վերջ գտաւ Վարժարանի Տնօրէնուհի՝ Առաքինազարդ Քոյր Լուսինայի Մննդեան մաղթանքներով: Ան շնորհաւորեց



Նախակրթարանի աշակերտները ելոյթի պահուն

եան: Անոնք ըմբոշինեցին 3-5 տարեկան փոքրիկներու ներկայացուցած այդ Մեծ Խորհուրդը... որ աւելի կը հզօրանար եւ կ'իմաստաւորուէր մանուկներու սուսած պատգամով:
Հ. Ք. Վարժարանի մանկապարտէզն էր իր լրիւ աշակերտներով, կը ներկայացնէր «հին դէպք» մը եւ միշտ այժմէական՝ Քրիստոսի Մնունդը իր բոլոր մանրամասնութեամբ: Ծնորհիւ մանկապարտէզի ուսուցչուհիներու մեծ համբերութեան, անոնք անգիր սորված էին բոլոր դէպքերու մանրամասնութիւնները եւ ամենայն ճարտարութեամբ բեմականացուցին եւ ներկայացուցին այդ օրերու դէպքերը, սկսելով մարդահամարէն, հրեշտակի աւետումը, Մանուկ Յի-

ծնողները, ներկաները, ապա շնորհակալութիւն յայտնեց բոլոր պատասխանատուներուն եւ ուսուցչուհիներուն իրենց անշահախնդիր աշխատանքին համար, որուն պտուղը վայելեցին ամբողջ մէկ ժամ:
ՆԱՆԱԿՐԹԱՐԱՆԻ ՐԱՆԴԵՍՈՒԹԻՒՆԸ
Այս տարի նախակրթարանն ալ իր պաշտօնական հանդէսը ունեցաւ ի մի բերելով վարժարանի բոլոր ծնողները, բարեկամները, նախկին շրջանաւարտները: Դեկտեմբեր 21ը, զեղեցիկ առիթ մըն էր միասին բաժնելու սքանչելի երեկոյ մը, ըմբոշինելով Աւետումը Մննդեան, զանազան լեզուներով:
Մար. ք էջ 19

ՀՈԳՇ. Տ. ՊԱՐԵՏ Ծ. ՎՐԴ. ԵՐԷՑԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԻԸ ԿԸ ՆՇԱՆԱԿՈՒԻ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդարանէն ներս ծառայող՝ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Անդամ, Հոգշ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան, Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի կողմէ Հոգեւոր Հովիւը նշանակուեցաւ Փաստիւնայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ:
Հայր Սուրբը իր պաշտօնը ստանձնեց Յունուար 8ին, 2007: Իսկ որպէս Հոգեւոր Հովիւ, իր առաջին Սուրբ Պատարագը պիտի մատուցանէ եւ քարոզէ Կիրակի, Յունուար 14ին, 2007: Արարողութեանց պիտի նախագահէ Առաջնորդ Սրբազան Հայրը եւ պիտի կատարէ նաեւ Պաշտօնի Հաստատման Կարգը:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՀՈԳՇ. Տ. ՊԱՐԵՏ Ծ. ՎՐԴ. ԵՐԷՑԵԱՆԻ
Հոգշ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան, աւագանի անունով Խաչիկ, ծնած է Երուսաղէմ, 1946ին: Իր ուսումը ստացած է տեղւոյն Սրբոց Թարգմանչաց Վարժարանին մէջ եւ ապա ընդունուած է Ժառանգաւորաց Վարժարանէն ներս, որուն Ընծայարանի բաժինը աւարտելէ ետք, 1966ին Աբեղայ ձեռնադրուած է Երուսաղէմի Պատրիարք՝ Երջանկայիշատակ Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս

